



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



Ամ-16 93

ՊԱՀՄԻ ՈՐԵՐ




ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒԹՅՈՒՆ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԽՈՍԿՎԱ

1929

THE
CITY
OF
NEW
YORK

BY
WILLIAM
H. DAVIS



Համ.
2-31682

Ն. ՈԼԵՅՆԻԿՈՎ

ՀՀ-1693
2-31682

ՌԱԶՄԻ ՈՐԵՐ

Հ 263



ՀԿԲ. № 20899

Гос. Публичн. Б-ка
1929.
Օճ. բկ. Պիգր.

ԽՍՀՄ ԺՈՂՈՎ. ՈՒՐԴՅԱՆ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՌՍԿԱ, 1929

Թուսերենից բարգի. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Главлит № А 13547

Зак. № 2641.

Тираж 3000 экз.

Книжн. ф-ка Центральн. Изд-ва Народов СССР. Москва, Шлюзовая наб., 6.

ԲՈՅԼՇԵՎԻԿՅԱՆ ԳԱՐՆԻԶՈՆԸ

Հաստլիկ սպան սեղանի առաջ նստած թերթում եր թղթերը ու մոմոռում.

— Կորչի պատերազմը, կորչի պատերազմը... Կորչի պատերազմը... կորչի...

Նրա կողքին նստած մի ուրիշ սպա դարմանքով հայացքը դեպի նա դարձրեց.

— Ի՞նչ ե պատահել ձեզ հետ, պորուչիկ, Բոյլշևիկ եք գրվել:

— Վոչ, ոեզոլյուցիաներն եմ կարդում:

— Ի՞նչ ոեզոլյուցիաներ:

— Պետրոգրադի գարնիզոնի զորամասերի ոեզոլյուցիաները: Սրիկաններ: Կովել չեն ուզում: Ցեվ բոլորը, ինչպես մեկ մարդ, բոյլշևիկներ են:

Այդ խոսակցությունը տեղի յեր ունենում Պետրոգրադի ռազմական շրջանի շենքում:

— Անցյալ շաբաթ, — շաբունակում եր հաստլիկը, — գեներալ Զերեմիովը հայտնեց կերենսակուն՝ «յեթե դուք Պետրոգրադի գարնիզոնը չցըեք, յես կհեռանամ»:

— Իսկ կերենսակին ի՞նչ ասաց:

— Պարզ ե թե ինչ: Այդ անիծյալ գարնիզոնը նրան
ել ե զզվեցրել: Բայց միայն շների պատգամավորների
խորհուրդն ե խանգարում:

Սպան վառեց պապիրոսը և ավելացրեց.

— Սակայն այժմ, թվում ե՝ մոտ ե: Ցերեկ Ժա-
մանակավոր կառավարությունը վորոշեց Պետրո-
գրադի զինվորներին ուղարկել ֆրոնտ և ցրել նրանց
այլ քաղաքներում: Կտեսնես, նրանք բունտ կսար-
քեն:

— Իսկ այստեղ նրանք վճռքան են:

— Վաթսուն հազար ձրիակերներ:

Այդ միջոցին հաստիկին մոտեցավ ադյուտանուը և
ասաց.

— Պորուչիկ Կոփով, ձեզ կանչում ե հրամանա-
տարը:

Հաստիկ սպան վեր կացավ, ցած գրեց պապիրոսը
և դուրս յեկավ սենյակից:

Տաս բոպե անց՝ նա վերադարձավ:

— Շնորհավորում եմ ձեզ! Տեսնում եք, յես իրա-
վացի եյի, — ասաց նա: — Կառավարությունից հրա-
մանատարը կարգադրություն ե ստացել գարնիզոնը
Պետրոգրադից դուրս անել: Մենք այսոր այդ մասին
հրաման ենք ուղարկում գարնիզոնի բոլոր զորամա-
սերին:

Յեվ իրոք, շտաբը յերեկոյան ցրել եր արդեն հրա-
մանը: Ահա թե ինչ եր ասվում հրամանում —

Դերմանացիք արդեն հեռու յեն:
Հեղափոխությունը վտանգի մեջ եւ Անհրա-
ժեշ և պաշտպանել Պետրոգրադի մոռակա կե-
սերը:

Դրա համար ել Պետրոգրադի ուազմական շր-
ջանի շաբար վորոշել եւ Պետրոգրադի զարմիզոնի
մի մասը ուղարկել Քրոնս, իսկ մյուս մասը
վերակազմել յեվ խաղաֆից դուրս բերել:

ՆԵՐԱՓՈԽԱԿԱՆ ՇՏԱԲԸ

Շտաբի հրամանը կարդալով, մորուքավոր զինվորը
թքեց ու ասաց.

— Գրողը տանի!

Հետո նորից թքեց ու կըկնեց.

— Գրողը տանի: Մենք առանց շտաբի յել զիտենք,
թե ումնից պետք եւ պաշտպանել Պետրոգրադը:

Այդ կատարվում եր Ֆինլանդական գնալի զորանո-
ցում: Այնտեղ հենց նոր եյին ստացել հրամանը:

— Ապա թող փորձեն գարնիզոնը հեռացնել: Մենք
նրանց ցույց կանք!... — ասաց թելավոր մի զինվոր:

Զինվորները նստած եյին թախտերի վրա ու մռայլ
փնթփնթում եյին:

Այդ միջոցին ներս մտավ մի սպա:

— Ազատ! — ասաց նա, թեև վոչ վոք նրա գալու
ժամանակ վոտքի չկանգնեց:

— Հրաման ե ստացված... — ասաց նա՝ վոչ վոքի
վրա չնայելով: — Հրաման ե ստացված ֆրոնտ մեկ-
նելու:

— Ի՞նքդ մեկնիր:

Սպան յետ քաշվեց դեպի գուռը.

— Յես, իհարկե, կզնամ... Յերբ շտաբը հրամայել եւ:

— Մենք այդ շտաբը չենք ճանաչում, — վրա բե-
րեց զինվորներից մեկը: — Այստեղ բազմել են գենե-
րալներն ու գնդապետները, իսկ մերոնցից, շարքավոր-
ներից չկան: Ահա և նրանք ել կարգադրում են: Մեզ
պետք ե այլ շտաբ...

— Ճիշտ ե, — հաստատեց միրուքավորը: — Հար-
կավոր ե այնպիսի շտաբ, ուր կարգադրի մեր հարա-
գատ զինվորը:

Սպան մի քայլ յետ քաշվեց.

— Շտաբը ժամանակավոր կառավարության կամքն
ե կատարում... — սկսեց նա:

— Իսկ յեթե նա ժամանակավոր ե, թող կորչի:
Մեզ հարկավոր ե մշտական կառավարություն, —
ընդմիջեց միրուքավորը:

Սպան արագ դուրս յեկավ զորանոցից:

Մի ժամ անց՝ զինվորները միտինգ սարքեցին...
Միտինգում վորոշեցին —

Շտաբին յենթարկվել:

Սեղծել սեփական շտաբ:

Գնդի կոմիտեյի նախագահը ոեզոլյուցիան յերեկո-
յան տարավ Պետրոգրադի խորհուրդը,

— Ահա, — ասաց նա, հանձնելով ռեզուլյուցիայի թերթը, — սրանով մերոնք խնդրում են, վոր խորհուրդը շտաբ կազմի: Հեղափոխական շտաբ!

— Դուք առաջինը չեք, — ասաց ռեզուլյուցիան վերցնող զինվորը: — Յես այսոր արդեն 46 այդպիսի ռեզուլյուցիաներ եմ ստացել: Հենց հիմա վերջացավ Պետրոգրադի խորհրդի պլենումը, ուր վորոշվեց կազմել Յեղափոխական շտաբ...

Տաս որ հետո Պետրոգրադի խորհրդին կից կազմվեց Ռազմա-յեղափոխական կոմիտեն:

Պետրոգրադի բոլոր գնդերը վորոշվեցին —

Պետրոգրադի զարնիզոնը այնիւ չի ճանայում ժամանակավոր կառավարությանը: Մեր կառավարությունը Պետրոգրադի խորհուրդն է: Մենք կենք արելի լենք միմիայն Պետրոգրադի խորհուրդի հրամաններին, վոր հրատարակում են նրա Ռազմա-յեղափոխական կոմիտեն:

ՊԵՏՔ Ե ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՑՆԵԼ

Փոքրիկ բնակարանում նստած եյին մի քանի մարդ՝ ծողովի քարտուղարը արձանագրեց —

Ընթացիկ մոմենտ։ Խոսիր պատկանում ե...

Նա ինչ վոր ազգանուն գրեց, բայց հետո խսկույն խնամքով չնշեց:

— Այս, ավելի լավ ե առանց աղքանվան, — ասաց
նրա հարևանը, վոր նայեց արձանագրությանը:

Իսկ զեկուցողը, վորի աղքանունը չնջել ելին, արագ
բարձարցավ աթոռից:

Դա Լենինն եր:

Չորս ամիս շարունակ նա թագնվում եր ժամանա-
կավոր կառավարությունից: 1917 թ. հուլիս ամսին
բանվորների անհաջող ապստամբությունից հետո բուր-
ժուազիան վորոնում եր Լենինին, վորապեսզի սպանե
նրան: Բայց բանվորները աջակցեցին Լենինին թագ-
նըվելու, և նա Պետրոգրադից հեռացավ:

Լրագրները գրում ելին, վոր Լենինը փախել ե
ստորջրյա նավակով կամ ողանավով: Իսկ Լենինը այդ
ժամանակ ապրում եր խոտհարքում, վրանում, Սես-
տրորեցկու մոտ:

Լենինին ուղարկում ելին բոլոր լրագրները, զրում
ելին նամակներ: Ուստի և նա լավ տեղյակ եր, թե ինչ
ե կատարվում Պետրոգրադում և ամբողջ յերկրում:

Արդեն հոկտեմբերին Ռուսաստանում համարյա թե
բոլոր բանվորներն ու զինվորները բոյլշևիկների կողմն
ելին:

Լենինը վճռեց — ժամանակ ե իշխանությունը վեր-
ցնելու:

Նա արդեն մի քանի նամակ եր գրել իր կուօակ-
ցական ընկերներին.

— Պետք ե ցրել ժամանակավոր կառավարությունը:

— Դանդաղելը հանցագործություն ե: Ժամանակ
ե իշխանությունը վերցնել:

Լենինը կարծում եր, վոր Պետրոգրադի բոյլշևիկ-ները չափազանց դանդաղ են գործում։

Յեվ նա ինքը անսպասելիորեն յերևաց Պետրո-գրադում։

Բոյլշևիկների կուսակցության կենտրոնական կո-միտեն հավաքվեց Լենինի գլխավորությամբ։

Ժողովը տեղի ունեցավ գաղտնի։

Ահա թե ինչու քարտուղարը այնպես խնամքով ջնջեց Լենինի ազգանունը արձանագրության մեջ։

ԶԵ վոր արձանագրությունը կարող եր ժամանա-կավոր կառավարության ձեռքն ընկնել, և այն ժա-մանակ նա կիմանար, վոր Լենինը Պետրոգրադումն եւ։

Լենինին ճանաչել չեր կարելի։ Նա ածելել եր մի-րուքը, գլխին դրել եր պարիկ։

Լենինը, ձեռքերը գրանները դրած, անցավ սեն-յակով և սկսեց ճառը։

Նա խոս ւմ եր այն մասին, վոր չի կարելի այլևս վոչ մի բոպե սպասել։ Բանվորները բոյլշևիկների կողմն են, զինվորները նույնպես։ Դրա համար ել պետք ե շուտով տապալել կերենսկուն և իշխանու-թյունը վերցնել։

Ընկերներից մի քանիսը համաձայն չելին Լենինի հետ։ Բայց կենտրոնական կոմիտեյի մեծամասնու-թյունը մտածում եր այնպես, ինչպես Լենինը, Վի-ճաբանությունից հետո կենտրոնական կոմիտեն վո-րոշեց —

«Սկսել զինված ապահանքություն»։

ՅԵՐԲ ՊԻՏԻ ԼԻՆԻ ԱՊՍԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

իսկ բուրժուական լրագրները շարունակում եյին
դրեւ —

— Ուր և Լենիը:

Մենք վաղուց ե, ինչ նրա մասին վոյինչ յենք
յուր:

Լուրեր են պտում, վոր նա արդեն յեկել է
Պետրոգրադ յեվ բազմվում է: Բայց մենք այդ
յուրերին յենք հավասում:

Մենք նույնիսկ սույզ գիտենք, թե վորսեղ է
Լենինը: Նա այժմ զվեցիայումն է: Դա նշա-
նակում է, վոր ապստամ բուրյունը շուտով կլինի:
Լենինը այդպիսիներից է: Նա միշտ յեզույ-
րից առաջ հեռանում է՝ անհաջողության դեպք
նկատի ունենալով:

Քաղաքացիներ, զգուշացե՛ք! Բոյլեվիկները
ապստամ բուրյունն են պատրաստում:

Սա զբում եր մի փոքրիկ, բայց նենդամիտ լրա-
դիր: Հոդվածը տպված եր առաջին յերեսի վրա, խո-
շոր տառերով:

Քաղաքում առհասարակ լուրեր եյին պտտում այն
մասին, վոր մոտ որերս սկսվելու յե բանվորների և
զինվորների ապստամբությունը ժամանակավոր կա-
ռավարության դեմ:

— Ի՞նչ են պատրասվում անել բոյլեվիկները —
յերկյուղով հարցնում եյին լրագրները:

— Դժե՞ք լէնիմին յեվ բանտարկեցեք նրան ! Յր
ցեք բոյշեվիկյան կուսակցությունը ! — դիմում եյին
նրանք կառավարությանը :

«Դեն՝» լրագիրը նույնիսկ տպել եր ապստամբու-
թյան քարտեղն ու ստույգ նիշել եր ապստամբու-
թյան որն ու ժամը։ Զանազան լրագրներ ապստամ-
բության զանազան ժամանակ եյին նախագուշակում։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-ԻՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-ԻՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 22-ԻՆ

Այդ որերին բոլոր տների պատերը ծածկված եյին
կոչերով, նախագզուշացումներով, պրոկլամացիաներով։

Մի՛ հավատաք բոյշեվիկներին յեվ նրանց գոր-
ծակալներին։

Այդ նախագուշակումներին ի պատասխան, «Քաբո-
չի Պուտ» («Բանվորական Ուղի») բոյլշևիկյան թերթը
հոդված տպեց —

Այժմ բանվորները սկսել են զինվել։

Բուրժուազիան զիսե իր անշիփները։ Նա առանց
ավելորդ խոսերի՝ Զմերային պաշտի մոտ թնդա-
նորներ ե շարել յեվ այնուղիւնակել պրապուջիկ-
ներին ու յունկերներին։

Իսկ նրա բակեյները հուզվում են ու անհանգստա-
նում։ Նրանք սաստիկ հարցաֆննում են մեզ ապս-
տամբության ժամանակի մասին։

Մեզ զրպարտում են յեվ մատնում, սպառնում են ու
սպադարտում, հարց ու փորձ են անում, հարցաֆնում:

Մեր պատասխանն ե՝

Բանվորներն ու զինվորները իշխանությունը կլեր-
ցնեն այն ծամանակ, յերբ նրանք այդ անհրաժեշտ
կղտնեն:

ՎԵՐԶԻՆ ԶՈՐԱՏԵՍՈՅ

Մինխստը կոնովալովի առանձնասենյակը ներս ըն-
կավ կառավարության գլուխը՝ կերենսկին: Հազին
ֆրենչ երև և բարձրավիզ դեղին կոշիկներ:

— Դուք զիտե՞ք այսոր ամսի քանիսն ե — խոպոտ
ձայնով պոռաց նա:

— Գիտեմ: Քսան... յերկուսը հոկտեմբերի, — պա-
տասխանեց կոնովալովը, պենսնեն քթին հազցնելով:

— Դե... չե՞ք լսել... — անհամբերությամբ կնճռոտ-
վեց կերենսկին: — Այսոր բոյլշևիկները ապստամբ-
ում են:

— Այսինքն ի՞նչպես թե ապստամբվում են:

— Դե... չե՞ վոր... այսոր Պետրոգրադի խորհրդի
որն ե: Գործարաններում ամեն տեղ միտինգներ են
կազմակերպվում: Յեվ շատ հավանական ե, վոր բոյլ-
շևիկները ապստամբվեն:

Մի քիչ շունչ առնելուց հետո, կերենսկին սկսեց
ինքն իրեն հանգստացնել.

— Ասենք... ապստամբվել նրանք չեն կարող...
Ժամանակավոր կառավարությունը բավականին ուժ

ու առկունություն ունի հայրենիքի դավաճաններին ճնշելու համար, բայց համենայն դեպս պետք է պատրաստ լինել:

— Ի միջի այլոց, — ավելացրեց նա, — ձեզ հայտնի ե, վոր Ժողովրդական տանը բոյլշևիկները մեզ համար վերջնական ճակատամարտ են պատրաստում:

Նա նստեց բազկաթոռին, կոնովալովի դիմաց, և խելույն մոռացավ այն, ինչի մասին խոսում եր մի բոպեր առաջ:

— Ասացեք, Ալեքսանդր Իվանովիչ, — դարձավ նա կոնովալովին, — ի՞նչ են խոսում բարձր շրջաններում իմ մասին և առհասարակ ի՞նչ կարծիք ունեն իմ մասին...

Այդ որը Ժողովրդական տունը մտնելը գրեթե անհնար եր: Նա ծայրից ծայր լի յեր:

Պետրոգրադի բոլոր ծայրերից հավաքված զինվորներն ու բանվորները լցրել ելին դահլիճները, բուժքետներն ու միջանցնքերը:

Մոտ չորս հազար մարդ ելին յեկել Ժողովրդական տունը:

Բայց աղմուկ չկար: Բոլորը, մտահոգված, ինչ վոր բանի ելին սպասում:

— Ընկերներ! — հանդիսավորությամբ սկսեց նախագահը, — Պետրոգրադի բանվորական և զինվորական պատղամավորների խորհրդի անունից կխոսի...

Նախագահը չվերջացրեց:

Աղաղակներից դահլիճում ապակիները զբնգացին.
— Կեցցէ Պետրոգրադի խորհուրդը:

Բայց ահա ովացիան վերջացավ: Տիրեց լոռոթյուն,
և հոետորը խոսեց:

Այն, ինչ նա ասում եր, պետրոգրադցիք լսել եյին
շատ անգամ:

Նա խոսում եր այն մասին, վոր Պետրոգրադի բան-
վորներն ու զինվորները հաստատ վորոշել են իշխա-
նությունը տալ Խորհուրդներին:

Նա խոսում եր այն մասին, վոր յերեք որ հետո
կըսցվի Խորհուրդների յերկրորդ համագումարը և վոր
պրոլետարները պետք ե այդ որվան պատրաստ լինեն:

Նա խոսում եր այն մասին, վոր միայն խորհրդա-
յին իշխանությունը կարող ե Ռուսաստանը և ամբողջ
աշխարհը իսկական ճանապարհով տանել:

Թվում եր թե ունկնդիրները մոռացել եյին ամեն
ինչի մասին...

Քրքրված շինելով մի զինվոր ամեն մի բոպե հա-
նում եր զիխարկը և կրկին ծածկում, ու չեր ել նկա-
տում թե ինչ ե անում:

Դեղին զիխակապով մի կին հոետորի հետ շարժում
եր շրթերը և չեր ել զգում, վոր յերեսից արցունք-
ներ եյին հոսում: Նա ամբողջ ժամանակ շարժում
եր զլուխը, կարծես համաձայնվելով:

Նկատելի յեր, վոր այդ վոտքի յելած ամբոխը այժմ
ուր ասես կգնար:

Մի մենշևիկ, վոր ներկա յեր այդ ժողովին, հինգ
տարի հետո այսպէս եր գրում այդ մասին,

— Յես կարծում եյի, վոր մարդիկ հիմա ծունկ
էչոգեն և կերպեն մի չլսված ու սարսափելի յերգ:

Այդ վճռական որը մարդիկ խոսում և լսում եյին
վոչ այնպես, ինչպես միշտ: Դա պրոլետարական ուժերի
զորատեսի որն եր:

Ահա և զեկույցը վերջացած ե: Զեկուցողը բանաձև
և առաջարկում՝ պայքարել խորհրդային իշխանություն
հաստատելու համար:

— Ո՞վ ե կողմնակից:

Դահլիճում հանկարծ աղմկեց քամին: Չորս հազար
մարդ միասին բարձրացրին ձեռքերը՝ վորպես յերդ-
ման համար:

Քվեարկությունը վերջացած ե: Բայց վոչ վոք
ձեռքը չի իջեցնում:

Հոետորը շարունակում է խոսքը, իսկ հազարավոր
ձեռքերը դեռ բարձրացած են: Հոետորը շրջահայեց
դահլիճը և բացականչեց.

— Յերդվեցեք! Յերդվեցեք մինչև արյան վերջին
կաթիլը պայքարել խորհրդային իշխանության համար:

Հոետորը մի վայրկյան կանգ առավ.

— Յեվ թող ձեր այս քվեարկությունը ձեր յեր-
դումը լինի:

Անհամար ամբոխը բարձրացրած ե ձեռքերը: Նա
համաձայն ե: Նա յերդվում ե:

Այդ որը ամբողջ քաղաքում, բոլոր գործարաննե-
րում նույնն եր կատարվում:

Կովկաս առաջ տրվում եյին վերջին յերդումները:

ԳՆԴԱՊԵՏ ՊՈԼԿՈՎՆԻԿՈՎԸ

Գլխավոր շտաբի առաջ կանգ առավ ավտոմբիլը:

Ավտոմբիլից դուրս յեկան յերեք մարդ: Նրանք արագ բարձրացան աստիճաններով:

— Այստեղ ե գնդապետ Պոլկովնիկովը, — հարցրին նրանք:

— Այո, շրջանի հրամանատարը այստեղ ե:

Յերեք անձնավորությունները մտան գնդապետ Պոլկովնիկովի առանձնասենյակը:

— Բարեւ, քաղաքացի, — ասացին նրանք: — Մենք Ռազմա-հեղափոխական կոմիտեյից ենք:

— Ի՞նչ եք կամենում, — հարցրեց գնդապետ Պոլկովնիկովը:

— Մենք կոմիտարներ ենք՝ ձեզ մոտ նշանակված. ձեր յուրաքանչյուր հրամանը վավերացված ոլիտի լինիք մեկնումեկի ստորագրությամբ: Առանց դրա՝ հրամանները անվագեք կհամարվեն:

— Վոչ մի կոմիտար ինձ հարկավոր չե, — դժգոհ ասաց գնդապետ Պոլկովնիկովը, — և յես ինսամակալության կարիք չունեմ:

— Ինկատի ունեցեք, վոր առանց մեզ վոչ մի զորամաս չի կատարի ձեր հրամանը:

Գնդապետ Պոլկովնիկովը ինքնավստահ առարկեց.

— Մենք այդ դեռ կտեսնենք: Գարնիզոնը իմ ձեռքումն ե, և յես ինչպես ուղեմ, այնպես ել կվարվեմ նրա հետո:

— Ասել ե՞ դուք հրաժերվիւմ եք յենթարկվել Ռազմական կոմիտեյին, քաղաքացի Պոլկովնիկով:

— Հրաժարվում եմ, ընկեր կոմիսարներ:

Այդ կարճ խոսակցությունից հետո՝ յերեք մարդը լուր հեռացան:

Գիշերը քաղաքում փակցվեց Ռազմական կոմիտեյի նոր հրամանը —

Պետրոգրադի զինվորական շրջանի հրամանաւասրը հրաժարվեց յենքարկվել Պետրոգրադի խորհրդի կամքին:

Այժմվանից ամբողջ իշխանությունը անցնում է Ռազմական կոմիտեյի ձեռքի:

Զինվորները պետք է կատարեն միմիայն նրա հրամանները: Բոլոր այլ կարգադրությունները, ում կողմից ել արված լինեն, հակա-հեղափոխական են ճանաչվում:

Այսպես սկսվեց պատերազմը հակա-հեղափոխական շտաբի և Ռազմական կոմիտեյի միջև:

ԶԵՐԲԱԿԱԼԵԼ!

Ուշ գիշերը Զմերային պալատ եյին հավաքվել բոլոր մինիստրները:

— Այսորվա նիստը պիտի գաղտնի լինի, — ասաց կերենսկին: — Մենք կքննենք, թե ինչպես պայքարել բոյլշևիկների դեմ:

— Նայեցեք, — բարձրացրեց նա ձեռքը:

Նրա ձեռքում եր մի փոքրիկ, վտիտ գրքույկ:

— Նայեցեք! Այս գրքույկը այժմ ազատ վաճառվում է բոլոր փողոցներում: Գրքի անունն ե՝ «Կարող են, արդյոք, բոյլշեիկները պետական իշխանությունը իրենց ձեռքում պահել»:

Կերենսկին մի վայրկյան լոեց ու անջատանջատ արտասահեց:

— Սա զրել ե Լենինը:

Դրանից հետո ակավեց նիստը:

Ամենից առաջ՝ մինիստրները վորոշեցին ձերբակալել Ռազմահեղափոխական կոմիտեն:

Հետո վորոշեցին ձերբակալել «հայտնի բոյլշեիկներին»:

— Լավ կլիներ գտնել և ձերբակալել Լենինին, — մոայլված խոսեց մինիստր Կիշկինը, — ասում են նա թագնվում ե Պետրոգրադում:

— Այո, մենք կգտնենք և կձերբակալենք նրան, — ասաց Կերենսկին:

Արև արդեն բարձրացել եր, իսկ նիստը դեռ շարունակվում էր: Մեկը մյուսի յետեկից վորոշումներ եյին ընդունում: Քարառուղարը գրի առնել չեր հասցնում —

Յունկերներին ռազմի պատրաստ կացուցանել:

«Ավրորա» հածանալին հրամայել ծով դուրս գալ:

Փակել բոյլշեվիկյան լրագրները:

Զինվորներին հրամայել զորանցներից դուրս չգալ:

Ճնշելու համար Ֆրոնժից զորքեր կանչել:

Բաց անել նեվայի բոլոր կամուրջները:

— Փառք աստծու, վերջապես մենք սկսեցինք
դործել, — բարձր ձայնով ասաց կիշկինը, իսկ արդեն
ցածր ձայնով վրա բերեց, — միայն թե ով պիտի կա-
տարի մեր հրամանները:

Այս բոլորը կատարվում եր հոկտեմբերի 24-ին
1927 թ.

ԱՌԱԶԻՆ ԼՈՒՐԵՐԸ

Զմերային պալատում տագնապի զանգ հնչեց:

— Կարելի՞ յե հեռախոսի մոտ կանչել ժամանա-
կավոր կառավարությունից վորևե մեկին:

Այլայլված մի ձայն գոռգոռում եր հեռախոսի մեջ,
նորությունները հաղորդելով:

Ահա թե ինչ իմացան մինիստրները:

Առավոտյան ժամը հինգ և կեսին յունկերների
առաջին ջոկատը պալատից դուրս ե յեկել կառավա-
րության հրամանները կատարելու համար: Զոկատը
գնում ե «Մարտի Պուտ» լրագրի տպարանը: Բոլոր
դոների մոտ պահակներ կարգելով, ջոկատի պետը
պահանջեց լրագիրը փակել: Յունկերները կնքեցին
լրագրի ութ հազար համար և իրենց պահակը դրին:

— Հիանալի յե! — ասաց հեռախոսի խողովակը
բոնող մինիստրը:

— Ներեցեք, այդ դեռ բոլորը չե, — շարունակեց
ձայնը: — Մի քանի ըովել հետո տպարանին մոտեցան
լիտովյան գնդի և 6-րդ պահեստի բատալիոնի զին-
վորները, յունկերներին ձերբակալեցին և դրին իրենց

պահակը։ Նրանք յեկել են Ռազմա-հեղափոխական կոմիտեի հրամանով։

— Այժմ ի՞նչ անենք, — հարցնում եր հեռախոսի խողովակից խոպոտ ձայնը։

Մինխստքները նայեցին իրար և լռեցին։

Իսկ պալատ եյին հասնում մեկը մյուսից ավելի տագնապալի լուրեր —

— «Ավրորա» հածանավը հրաժարվեց կառավարության հրամանին յենթարկվել։ Նա ծով դուրս յեկավ յեվ կանգնած և նեվայի վրա, ինչպես անցյալ գիշերը։

— Մատուները ձերբակալեցին հածանավի հրամանատարին յեվ այժմ սպասում են Ռազմա-հեղափոխական կոմիտեի կարգադրության։

— Հեծանիվավորների ամենահուսադի բատալիոնը անցավ Ռազմա-հեղափոխական կոմիտեյի կողմը։

— Բոյլեվիկներին ճնշելու համար կառավարության կողմից Քրոնից կանոված զնդերը հրաժարվեցին առաջանալուց յեվ մնացին իրենց տեղերում։

— Քրոնից կանոված հեծանիվավորների 5-րդ բատալիոնը, հասնելով Պետեղորսկայա կայսրանը, անցավ բոյլեվիկների կողմը։

— Պետրովի յունկերները հրաժարվեցին ժամանակավոր կառավարությանը պաշտպանել։

— Իսկ ով պիտի պաշտպանի մեղ, — վախեցած հարցրեց մեկը։

— Յունկերներն ու կանանց բատալիոնը, — արագ պատասխանեց Կերենսկին։ — Կանանց բատալիոնը արդեն այստեղ է։

— Անհարմար եւ կարծես, — ասաց Տերեշենկոն
— Ի՞նչ, — խստորեն հարցրեց Կերենսկին:
— Այն, վոր մեզ կանայք են պաշտպանելու:
Կերենսկին ձևացրեց թե չլսեց:
— Ցես այժմ մեկնում են նախապարլամենտ, —
հաղճեալ ասաց նա ու դուրս յեկավ:
Ուշ գիշերը, ժամը 12-ին, ժամանակավոր կառա-
վարությունը նորից գաղտնի նիստ ունեցավ:
Վորոշում եյին, թե ինչպես ամենից հաջող կեր-
պով Սմոլնին գրավեն:
Վորոշեցին շտապ գրավել այն:
Իսկ ութ ժամ հետո Կերենսկին ամերիկական ավտո-
մոբիլով ընդմիշտ փախավ պալատից և Պետրոգրադից:
Իր մինիստրներին նա թողեց բախտի բերմունքին:

ՈՎԼ ՈՒՄ ԿՁԵՐԲԱԿԱՆԻ

Ամենաղժբախտ մարդը քննիչ Գուդիլովիչն եր:
Վաղ առավոտյան ժամանակավոր կառավարության
անունից արդարադատության մինիստրը նրան կա-
րևոր գործ հանձնարարեց:
Գուդիլովիչը պետք ե իր մոտ կանչեր և քններ
Ռազմահեղափոխական կոմիտեյի անդամներին: Այդ-
պես եր հրամայել նրան ժամանակավոր կառավարու-
թյան արդարադատության մինիստրը:

Ժամը տասին Գուդիլովիչը սկսեց զանգել բոլոր հե-
ռախոսներով: Նա ուզում եր, վոր ամբողջ Ռազմա-
հեղափոխական կոմիտեն ներկայանար իրեն և ցուց-

մունքներ տար իրեն հանցագործության վերաբերյալ
Գուղիլովիչը հասարակ քննիչ էր, այլ հատուկ կա-
րեռը գործերի քննիչ, և դրա համար ել կարծուե՛ եր,
վոր կանչվածները պիտի ներկայանան իրեն առանց
հապաղելու:

Սակայն հեռախոսով նրանց կանչել չհաջողվեց:
Սմոլնի ինստիտուտը, ուր տեղավորվել եր կոմիտեն,
հեռախոսային ցանցից անջատված եր:

Այն ժամանակ Գուղիլովիչը իր ոգնականներին
հրամայեց՝ շուտով իմանալ Ռազմա-հեղափոխական
կոմիտեյի անդամների տների հասցեն և շտագ կեր-
պով նրանց կանչել քննության համար:

Իսկ ինքը վորոշեց առայժմ փողոցները շրջել:
Դունից դուրս գալով, նա տեսավ տան պատին փակ-
ցրած հսկայական հայտարարությունը կարդացող
ամբոխ:

Գուղիլովիչը հետաքրքրվեց:

Նա մոտեցավ ու կարդաց հետեյալը —

Պէտրոգրադի թնակյուրյան.

Քաղաքացիներ!

Հակա-հեղափոխուրյունը բարձրացրեց իր հան-
գավոր գլուխը: Պորադիլվականները հավաքում են
իրենց ուժերը, վորոշեսզի Խորհուրդների համառու-
սական խորհուրդը ձնշեն: Միաժամանակ ցարդա-
րարները կարող են փորձ անել Պէտրոգրադի փողոց-
ներում խոռվուրյուն ու կոսորած առաջ բերելու:

Պէտրոգրադի բանվորական յեվ զինվորական պա-

զամավորների խորհուրդը իր վրա յեւ վերցնում հեռավորիսկան կարգի պահպանությունը հակահեղափոխական յեվ ջարդարարական փորձերից:

Պետրոգրադի գարմիզոնը չի բույլ տա վոյ մի բբուռություն յեվ անկարգություն: Բնակչության կոյ և արվում՝ խոշիզաններին ձերքակալելու յեվ մոտակազինվորական մասում Խորհրդի կոմիսարներին հանձնելու: Մուր Տարրերի կողմից Պետրոգրադի փողոցներում խոռվություն, կողոպուտ, դաճակակոյիվ կամ հրաձգություն առաջ բերելու առաջին փորձից — հանցազործները բնացինց կարվեն:

Ռազմահեղափոխական կոմիտե:

24 հոկտեմբերի 1917 թ.

— Բնաջինջ կարիլեն... — ինքն իրեն շշնջաց քննիչ Գուղիլովիչը և մի թեթև ցուրտ վազեց նրա մեջքն ի վեր:

Նա առաջին անգամ մտածեց, վոր Ռազմահեղափոխական կոմիտեն կարող ե և չգալ քննության:

Այն մարդկանցից, վորոնք այդպիսի հայտարարություն են գրել, ամեն ինչ սպասելի յեւ:

Գուղիլովիչը առաջ անցավ:

Ծովելով դեպի նրբագողոց, նա հանկարծ տեսակ վոր առաջ գնալ անհնար ե:

Ամբողջ փողոցը լի յեր գորշ շինելներ հագած մարդկանցով:

«Միտինգ ե», — մտածեց հատուկ կարևոր գործերի քննիչը և մոտեցավ լսելու:

Փողոցի մեջտեղում՝ դրված եր սեղանը։ Սեղանին
բարձրացավ հսկայական հասակով շիկադեմ մի զինվոր,
վոր ձեռքերը թափահարելով ճշում եր այնտեղից՝
— Ասել ե՛ բոլորը համաձայն են, ընկերներ։ Հրա-
ցանները ձեռքներիս կալաշտպանենք Ռազմա-հեղափո-
խական կոմիտեն։

— Ուռուա! — գոչեցին զինվորները։
Իսկ Գուղիլովիչի կողքին կանգնած մեկը պոռաց
թոքերի ամբողջ ուժով։

— Ով կոմիտեյի դեմ ե, նրան պետք ե փոշի դար-
ձնել տրորելով։

Գուղիլովիչը շտապ հեռացավ։

Սակայն մյուս փողոցում ել միևնույնն եր։ Այն-
տեղ ել զինվորական միտինգ եր, այնտեղ ել զինվոր-
ները ինչ վոր աղաղակում եյին Ռազմա-հեղափոխական
կոմիտեյի մասին։

Վեց անգամ Գուղիլովիչը ուղղվեց զանազան կող-
մեր և վեց անգամ ել դեմ եր առնում միտինգների։

Նա դուրս ցեկավ մի ինչ վոր հրապարակ և գորշ
ամբոխի փոխանակ տեսավ սև ամբոխ։ Սրանք վոչ
թե զինվորներ եյին, այլ մատրոսներ։

— Մահ Ռազմա-հեղափոխական կոմիտեյի թշնամի-
ներին — լսեց նա։

Գուղիլովիչը չեր ուղում մեռնել։ Դրա համար նա
իր քայլերն ուղղեց դեպի նեվա։ Նիկոլաեյան կա-
մուրջի մոտ կանգնած եր արդուկի նման հսկայական
հածանավը։

«Ավրորա» — կարցաց նա հածանավի ճակատին։

Մի մարդ նավի վրայից ձայն եր տալիս ափին
կանգնած իր ընկերոջը՝

— Ռազմա-հեղափոխական կոմիտեյի հրամանով
մենք մնում ենք:

Կես ժամ հետո Գուղիովիչը սոտեցավ Պետրոպավ-
լովյան բերդին: Բերդի դարպասներից ամեն բռպե դուրս
են զալիս ձեռքերում հրացաններ բռնած մարդիկ:

— Այս ի՞նչ ե, — արդեն անհանգիստ հարցը Գու-
ղիովիչը անցորդից:

— Ռազմա-հեղափոխական կոմիտեն զինում ե կար-
միր գլարդիան:

— Պետք ե տուն գնալ, — մտածեց ինքն իրեն Գու-
ղիովիչը:

Մոտենալով տանը, նա պատի վրա տեսավ մի նոր
հայտարարություն —

Զինվորներ! Բանվորներ! Քաղաքացիներ!

Ժողովրդի բշնամ իները զիշերը հարձակման ան-
ցան: Դավադրական հարված ե պատրասվում Պետ-
րովրադի բանվորական յեվ զինվորական պատզա-
մավորների խորհրդի դեմ: Հակա-հեղափոխական
դավադիրների արշավը ուղղված ե Խորհուրդների
համառուսական համագումարի դեմ՝ նրա բացման
նախորյակիմ, ժողովրդի դեմ: Պետրովրադի բանվո-
րական յեվ զինվորական պատզամավորների խոր-
հուրդը պաշտպան ե կանգնած հեղափոխության: Ռազմա-
հեղափոխական կոմիտեն դեկավորում ե
դավադիրների գրոհի ընդդիմադրությունը: Ամբողջ

զարնիզոնն ու ամբողջ պրոլետարիատը պատրաստ է և
ժողովրդի քշամունք խորտակահար հարկած տարւ:

Զինվորների, բանվորների յեվ գյուղացիների բոլոր
նվաճումներին ու հոյուերին մեծ վտանգ և
սպառնում, սակայն հեղափոխության ուժերը ան-
համեմատ զերազանցում են քշամունքներին։ Ժո-
ղովրդի զործը հաստատ ձեռփերում է։ Դավադիրները
պես և խորտակվեն։

Ծագմա-հեղափոխական կոմիտե։

24 հոկտեմբերի 1917 թ.

Հատուկ կարեոր գործերի քննիչին սարսափ պատեց։
Նա բարձրացավ աստիճաններով և անցավ իր
առանձնասենյակը։

Ծառայողներից վոչ վոք չկար։

Սեղանի վրա ընկած եր մի թուղթ։ Դա ժամանա-
կավոր կառավարության կարգադրությունն եր հա-
տուկ կարեոր գործերի քննիչին։

Գուղիլովիչը կարդաց՝

. . . հարցանեության յենքարկել Ծագմա-հեղափոխա-
կան կոմիտեի բոլոր անդամներին։

Գուղիլովիչը վերցրեց թուղթն ու պատառ-պատառ
արավ։

Նա վերջապես հասկացավ, վոր Ծագմա-հեղափոխա-
կան կոմիտեն իրան չի ներկայանա։

ԳՈՐԾԸ ՍԿՍՎԵՑ

Ռազմահեղափոխական կոմիտեյի անդամները չներկայացան քննիչ Գուղիղովիչին:

Նրանք ժամանակ չունեյին: Նրանք այդ միջոցին խորհրդակցում եյին, թե ինչպես վերցնեն Զմերային պալատն և ձերբակալեն կառավարությունը:

Սմոլնիում չորս մարդ կանգնած եյին Պետրոգրադի մեծ քարտեզի առաջ: Ահա Զմերային պալատը, Նրա հանդեպ, Նեվայի մյուս ափի վրա, — Պետրոպալավլովյան բերդը:

— Պետք ե ողակով շրջապատել պալատը, — ասաց բարձրահասակ նիհար մարդը: — Չորքերը միանգամից կզնան յերեք կողմից: Իսկ յեթե կառավարությունը անձնատուր չի լինի, մենք «Ավրորայից» և Պետրոպալավլովյան բերդից կը լրակ բաց կանենք:

— Հարձակումը կսկսեն ամենակայուն մասերը: Ազդանշանը կտա բերդի թնդանոթը:

Շատ չխորհրդակցեցին:

Չորս կոմիսարները սեղմեցին իրար ձեռք և Սմոլնից դուրս յեկան դեպի ցուրտ ու խավարը:

Սմոլնիի թաց աստիճանների վրա տասնյակ բանվորներ եյին կանգնած՝ հրացանները ձեռքերին: Նրանք բոլորը պատրաստ եյին հենց առաջին հրամանով շարժվել՝ ուր վոր կամենան: Հոգնածությունից և հուզումից բորբոքված աչքերով նրանք ճանապարհ եյին

գցում Սմոլնիից դուրս յեկող Ռազմա-հեղափոխական
կոմիտեյի չորս անդամներին:

Նրանք արագ իջնում են աստիճաններից ու նստում
ավտոմոբիլը: Կարմիր գվարդիականները յետ են քաշ-
վում — ճանապարհ տալիս:

Նրանք զգում են, վոր այդ ըոսկեյից դործը սկսվեց:

Հեղափոխական մասերը լուռ ու հանդարտ սկսեցին
Զմերային պալատի հրապարակին մոտենալ:

Հրապարակի վրա վոչ մի լապտեր: Զմերային պա-
լատի պատուհանների յերկու յէրկար շարքերը սեա-
նում եյին խավարում:

Այդ իսկ միջոցին Նիկոլաևյան՝ կամուրջին սկսեց
մոտենալ հածանավը: Ամբողջ տախտակամածը ծածկ-
ված եր մարդկանցով:

Կամուրջը այդ միջոցին պաշտպանում եյին յուն-
կերները:

— «Ավրորան», — բացականչեց նրանցից մեկը,
տեսնելով մոտեցող հածանավը:

Այս վոչ մի խոսք չասելով, յունկերները դար-
ձան ու գնացին:

Քաղաքը քնած չեր:

Անուուրեք դործարանների դարպասներից դուրս
եյին գալիս բանվոր կարմիր գվարդիականների ջո-
կատները: Նրանք բոլորը միաժամանակ ստացել եյին
Ռազմա-հեղափոխական կոմիտեյի հրամանը —

— Առաջ խաղաղ!

Անհրաժեշտ եր գրավել բոլոր կայարանները, վորպեսզի կառավարությունը չկարողանար հակառակ դափնիսական գորքեր կանչել:

Գիշերվա ժամը յերկուսին հեռախոսով հայտնեցին
Ամոլնուն՝

— Նիկոլաևյան վակզալը գրավված եւ:

Մի ըսպեյից ելի զանգ՝

— Բալտիական վակզալը եւ:

Հելսինգֆորսից ու Կրոնշտադտից անընդհատ գալիս եյին մատրոսներ՝ ապստամբներին ոգնության:

Նեվայի վրայով մեկը մյուսի յետեկից շարժվում են ականակիրները:

Ռազմահեղափոխակ, կոմիտեն հարձակման անցավ։
Վերջանում եր գիշերը։ Բացվում եր առավոտը։

Ցերեկի լույսով անցորդները տեսան տների պատերի վրայի հայտարարությունը՝

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՊԱԼՎԱԾ Ե

ՊԱՇԱՐՈՒՄԸ ՅԵՎ ԳՐՈՒԸ

Իսկ տապալված ժամանակավոր կառավարությունը անընդհատ խորհրդակցում եր Զմերային պալատի ներքին սենյակներում։ Կապույտ մահուդով ծածկված սեղանի առաջ նստած եյին 13 մարդ։

Արդեն վողջ քաղաքը Ուազմահեղափոխական կռւմիտեյի ձեռքն եր, բայց մինխստըները դեռ քննում եյին, թե ինչպես կուվեն բոյլշեիկների դեմ:

Բոյլշեիկները ավելի ու ավելի եյին մոտենում պալատին: Դեռ յերեկ յերկրագնդի մի վեցերորդը կառավարող ժամանակավոր կառավարությունը այժմ տիրում եր միայն կարմիր յեռահարկ տանը — պալատին:

Բայց մինխստըները չեյին վհատում: Նրանք խորհրդակցում եյին, վիճում, իրենց համար նորանոր պաշտոններ ու կոչումներ հնարում:

Առաջին հերթին նրանք մինխստը կիշկինին հանձնեցին մայրաքաղաքի պաշտպանության գլխավոր դեկավարությունը, նրան յենթարկելով բոլոր քաղաքացիական և զինվորական իշխանությունները:

Նոր նշանակման մասին գիտեյին միայն Զմերային պալատում:

Սակայն կիշկինին այդ չեր վրդովում: Նա վերցրեց թուղթը և գրեց իր առաջին հրամանը —

Պետրոգրադի գինվորական շրջանի գլխավոր հրամանատար զնդապետ Պոլկովնիկովը հեռացվում և պաշտոնից: Նրա Տեղը նշանակվում է գեներալ Բագրատունին:

25/X — 1917 թ.

Հրամաններ եյին գրում և այլ մինխստըները: Թվում եր թե նրանք վոչինչ չեյին տեսնում ու հասկանում:

Պալատից տաս քայլ հեռավորության վրա հաստատվում եյին բոյլշեիկների գնդացիրները, իսկ մինիստր Կոնովալովը՝ կարծես թե վոչինչ չեք պատահել՝ գրում եք —

Պետրովադում հասունանում են ահեղ անցեր...

Հրապարակի վրա յերևացին զրահապատները՝ Նրանք հանգիստ, ինչպես զորահանդեսի ժամանակ, յերթեեկում եյին պալատի առաջ: Նրանցից մեկը հանկարծ ու անսպասելի շուռ յեկավ և աղմուկով մոտեցավ զլխավոր մուտքին:

Այստեղ կանգնած եյին յունկերները՝ հրացանները ձեռքներին: Նրանք պահպանում եյին զլխավոր մուտքը:

Զրահապատի գնդացիրային լուսամուտներից ձայն տվին.

— Ապա, սիրելիք, հրացանները դրեք զրահապատի վրա, յեթե վոչ, ձեզ բոլորիդ վորպես սագերի կզնդակահարենք:

Յունկերները լոելյայն Պատրիած դրին հրացանները, և զրահապատը հանգիստ հեռացավ:

Յերեկոյան դեմ յերկու հեծանիվավորներ բերին ժամանակավոր կառավարությանն ուղղած Ռազմահեղափոխական կոմիտեյի կոմիսար Անտոնով-Ռիսեյնկոյի նամակը:

Դա ուղարկմատում եք, վերջնապահանջ—

Յերեկ կառավարությունը անձնատուր յի յինի,
պարագի վրա Պետրովավովյան բերդից յեկ «Ավրորա»-ից կրակ բաց կարվի:
Խորհելու համար ՏՎՈՒՄ է 20 րոպե:

Ստացված ուլտիմատումի մասին լուր տարածվեց ամբողջ Զմերային պալատում։ Անքնությունից և լարված սպասումից տանջված յունկերները խոնվել եյին այն դահլիճի դրան առաջ, ուր խորհրդակցում եյին մինիստրները։

Դուրս յեկավ մինիստր Կիշկինը։

— Ժամանակավոր կառավարությունը, — ասաց նա, — վորոշեց բոյլշևիկներին վոչ մի պատասխան չտալ։ Բոյլշևիկների կողմն են միայն զինվորների մի շնչին խմբակ։

— Ապա ինչու, պարոն մինիստր, պատում այդքան քիչ զորք կա, — հարց տվեց յունկերներից մեկը։ Կիշկինը ուսերը վեր քաշեց։

— Պալատում տեղ քիչ կա։ Յեվ հնարկավոր չե տեղավորել ժամանակավոր կառավարության բոլոր պաշտպաններին։

Յունկերները դժգոհ ցրվեցին։

Իսկ նոր զիսավոր հրամանատար գեներալ Բագրատունին մոտեցավ Կիշկինին և ասաց։

— Յես հրաժարվում եմ զիսավոր հրամանատարի պարտականությունները կատարելուց։

Կիշկինը սեղանի մոտ վագեց և արագորեն հրաման գրեց այն մասին, վոր Բագրատունին հեռացվում եղավոր հրամանատարի պոստից, «Փրկեանաւության համար անարժան»։

Պաշտոնազուրկ զիսավոր հրամանատարին հրամանեցին հեռանալ պալատից։

Մի ժամ հետո Որանիենբաումի դպրոցի յունկերները պատվիրակություն ուղարկեցին բոյլշևիկների մոտ։

— Մենք կամենում ենք անձնատուր լինել, — հայտարարեցին նրանք:

Ռազմահեղափոխական կոմիտեյի անդամ Զուղնովսկին պալատ ուղևորվեց յունկերների հետ բանակցելու համար։ Մինիստրները կարգադրություն արին նրան բանտարկելու։ Սակայն Որանիենբառումին կողմնակից յունկերները սպառնացին։

— Արձակեցեք և նրան և մեզ, թե չեւ կկռվենք !

Յեվ ժամանակավոր կառավարությունը համաձայնվեց։

Զուղնովսկին ազատված եր, իսկ յունկերները մեկմեկ հեռացան պալատից։

Յերեկոյան ժամը 9-ին վորոտաց վաղուց սպասելի թնդանոթի պայթյունը Պետրոպավլովյան բերդից։ Դա — պալատի վրա գրոհ տալու ազդանշանն եր։

«Ամրորա» հածանավը պատասխանեց դատարկ պայթյունով։ Հրապարակի վրա ճռճռացին գնդացիրները։ Յունկերները փայտակույտերի յետեկց պատասխանեցին հրացանային և գնդացիրային կրակով։

Իսկ մինիստրները խորհրդակցում եյին։ Գնդացիրների տրաքոցների տակ նրանք բնակչությանը դիմում եյին գրում։

Զմեռային պալատի վրա առաջին հարձակումը յետ եմդված։

Հրացանաձդությունը տևեց մի քանի ժամ։ Կրակում եյին արդեն վոչ թե հրացաններից ու գնդացիրներից, այլ թնդանոթներից։

Իսկ մինխարները դեռ նստած եյին սեղանի շուրջը
և մեկը մյուսի յետեից դիմումներ եյին գրում. —

Կառավարությունը ամբողջ կազմով իր պոսի վրա լի:
Քրուրյունը բարենպաս ե:

Դրությունը իրոք բարենպաստ եր, բայց միայն
վոչ ժամանակավոր կառավարության համար:

Տարաբախտ յունկերները դեռ դիմադրում եյին
փայտակույտերի յետեից և անկանոն կրակում եյին
պալատի պատուհաններից ու դռներից: Բայց վոչ վոք
չգիտեր թե ինչ անել և ում լսել:

Պալատին ոգնության վոչ վոք չեր գալիս: Իսկ պալա-
տից մեկը մյուսի յետեից հեռանում եյին ժամանակա-
վոր կառավարությանը պաշտպանող գորամասերը:

Առաջինը հեռացան միխայլովյան արտիլերիական
դպրոցի յունկերները՝ իրենց հետ տանելով չորս հրա-
նոթ: Նրանցից հետո տուն գնաց Հյուսիսային ֆըռնտի
պլապորշիկների դպրոցը: Սրանցից հետո ժամանա-
կավոր կառավարության հրաժեշտ տվին և կողակները:

Յերեկոյան ժամը 11-ին կարմիր գվարդիականները
սկսեցին պալատ մտնել: Սկզբում նրանք ներս եյին
ընկնում մեկ-մեկ, յերկու-յերկու: Նրանց իսկույն
շրջապատում եյին յունկերները, խլում նրանց հրա-
ցանները ու տանում յետին սենյակները, իբրև ուղ-
մագերիների:

Սակայն մի ժամ ու կեսից հետո գերիները այն-
քան շատ եյին, վոր սկսեցին յունկերներին զինա-
թափ անել:

Պալատում սկսվեց խառնաշփոթությունը։ Պալատը
վերցնում եյին վոչ միայն հրապարակի կողմից, այլ
և ներսից, մի սենյակը մյուսի յետեկց։

Ժամը 2-ից անց 10 ըովե՛ Ռազմա-հեղափոխական
կոմիտեյի զորքերը մտան Զմերային պալատը։

Դղրդացող պայթյունները ցնցում եյին պատերն
ու առաստաղը։ Կամարավոր միջանցքներն ու սեն-
յակները պատաժ եյին կապույտ վառողածխով։
Յունկերներից վոմանք զցում եյին հրացաններն ու
անձնատուր լինում, մյուսները նահանջում եյին պա-
լատի խորքը։

Միայն Ժամանակավոր կառավարության սենյակում
ամեն ինչ առաջվա պես եր։ Մինիստրները շտապ
վերջացնում եյին հրամաններն ու դիմումները։

Կոնվալով հենց նոր եր սկսել հորինել նոր դի-
մում, —

Ժամանակավոր կառավարությունը
դիմում ե բնակչության բոլոր դա-
սակարգերին, խնդրելով ոգնել Ժա-
մանակավոր կառավա...

Նա դեռ չեր գրել «րությանը», յերբ աղմուկով
բացվեցին դռներն, ու մինիստրները յունկերների
թիկունքի յետեւ տեսան մատրոսների կլոր գդակներն
և կարմիր գվարդիականների գլխարկները։

Զմեռային պալատը վերցված եր։

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆԱԽՈՐՅԱԿԻՆ

Դրանից մի քանի ժամ առաջ Պետրոգրադի խորհրդի նկատում բանվորներն ու զինվորները լսեցին.

— Այստեղ ներկա յե Լենինը:

Աղաղակների ու ծափահարությունների տարափի տակ ամբոնն բարձրացավ Լենինը:

Ահա թե ինչ ասաց Լենինը.

«Ընկերներ: Բանվորական և գյուղացիական հեղափոխությունը, վորի մասին միշտ խոսում եյին բոյլշեվիկները, կատարվեց:

«Ի՞նչ նշանակություն ունի այդ հեղափոխությունը:

«Նախ՝ մենք կունենանք վոչ թե բուրժուական, այլ խորհրդային կառավարություն: Մենք կունենանք իշխանություն, վոր կստեղծեն իրենք աշխատավորները: Հին պետական ապարատը ջարդ ու փշուր կարվի: Այժմ յերկիրը կկառավարեն խորհուրդները:

«Այս հեղափոխությունը մեզ կտանի դեպի սոցիալիզմի հաղթությունը:

«Այժմ ամենից առաջ մեզ հարկավոր ե վերջ տալ պատերազմին: Բայց վորպեսզի վերջ տալ պատերազմին ամբողջ աշխարհում, պետք ե վոչնչացնել կապիտալիստներին: Մեզ, այդ գործը կատարելիս կողնեն ամբողջ աշխարհի բանվորները:

«Մենք կառաջարկենք բոլոր պատերազմող յերկրների բանվորներին իրավացի հաշտություն: Մենք կհրատարակենք բոլոր գաղտնի պայմանագրերը:

«Գյուղացիության մեծամասնությունը Ռուսաստանում պարզապես ասաց — բավական ե՞ ինչ խաղ արինք կապիտալիստների հետ, մենք կերթանք բանվորների հետ։ Գյուղացիք այժմ ավելի կհասկանան բանվորներին, քանի վոր մենք կիմենք հողը կալվածատերերից և կտանք գյուղացիներին։

«Գլխավոր փրկությունը այժմ — բանվորների և գյուղացիների դաշն եւ Իսկ միացյալ գործել — բանվորներն ու գյուղացիք արդեն սկսել են։ Այդ մասին ասում ե հենց նոր կատարված հեղափոխությունը։

«Մենք կհաղթենք և կառաջնորդենք պրոլետարիատին դեպի համաշխարհային հեղափոխություն։

«Կեցցե՛ համաշխարհային սոցիալիստական հեղափոխությունը»։

«ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԶԵՐՔՈՒՄՆ Ե»

Արդեն տասնյերկու ժամ կռվում եյին բանվորները, գյուղացիք և մատրոսները։

Նրանք պատրաստվում եյին խլել իշխանությունը բուրժուազիայի ձեռքից և հանձնել բացվող Խորհրդների յերկրորդ համագումարին։

Համագումարը բացվեց նոկտեմբերի 25-ին, յերեկոյան 10 ժամ 48 րոպեյին։

Նախագահական սեղանի մոտ տեղից բարձրացավ մոռայլ ու ճաղատ մի մարդ՝ զինվորական բժշկի համագուստ հազած, և ասաց վոչ բարձր ու վհատ՝

— Յեվ այսպես, համագումարը հավաքվեց։

Նա տիսրությամբ ասաց այս խոսքերը:

Դա մենշկիկ Դանն եք:

Նա պիտի բանար համագումարը՝ նախկին վերընտրված խորհուրդների գործադիր կոմիտեյի անդամի պարտականությամբ:

Յեվ բոլորին և իրեն պարզ եք, վոր այդ մենշեկիկներից ու եսերներից բաղկացած կենտրոնական գործադիր կոմիտեն ապրում ե իր վերջին բոպեները: Բայց ինչ կարող եք անել: Մենշկիկ Դանը պարտավոր եք բոյլշկիկներից կազմված համագումարին ասել ներածական խոսք:

Նույն գերեզմանային ձայնով նա շարունակեց.

— Այժմ ժամանակ չե քաղաքական ճառերի: Իմ ընկերները Զմերային պալատում հրաձգության մեջ են...

— Յեվ նրանց պաշտպանում են կանայք, — կամաց ավելացրեց մի ուրիշը:

Մի թեթև ծիծաղ անցավ շարքերում:

Պատգամավորները պարզապես պատկերացրին, թե ինչպես այնտեղ, Զմերային պալատում, նստած վուկեզոծ բաղմոցների վրա, սպասում են իրենց վիճակին ճաղատ մարդու ընկերները: Յեվ նրանց պաշտպանում են յունկերներն ու զինվորական համազգեստ հագած կանայք:

— Բանվորական և զինվորական պատգամավորների խորհուրդների յերկրորդ համագումարը հայտարարում եմ բացված — շնչաց տիսուր մարդը:

Նրա կողքին նստած նրա ընկերները մուայլ ու լուռ ելին:

Ներածական խոսքից հետո ընտրվեց համարյա թե ամբողջովին բոյլզեիկներից բաղկացած նոր նախագահությունն Նախագահական սեղանի մոտ յերևացին առույգ, ուրախ մարդիկ:

Շուտով մենչեիկներն ու եսերները թողին վոչ միայն նախագահության բաղկաթոռները, այլ և բոլորովին հեռացան նիստի դահլիճից:

— Մենք բողոքում ենք ընդդեմ ապստամբության, — հայտարարեցին նրանք, և մյուս պատգամավորների սուլլուցների ու ծիծաղի տակ այդ փոքրիկ խմբակը դիմեց դեպի դուռը...

Համագումարը շարունակվեց:

Ամեն մի հինգ բոպեյից հետո մեկն ու մեկը ամբիոն եր բարձրանում նորություններով՝

- Վերցված ե զլխավորը շտաբը:
- Գրոհում են Զմերային պալատը:
- Ցունկերները անձնատուր են լինում:
- Ժամանակոր կառավարությունը բանտարկված ե:

Ցեվ այսպես, Պետրոգրադը ապստամբների ձեռքումն եւ Բայց կը արձրանա արդյոք Պետրոգրադի հետ և ամբողջ Ռուսաստանը՝ իսկ զլխավորը՝ ի՞նչ կասեն ֆրոնտում զի՞նվորները։ Ի՞նչ կասե բանակը։

Ուղիղ 5 ժամ 17 բոպեյին ամբիոն բարձրացավ մի գունատ մարդ։

Նա տարութերվում եր հոգնածությունից։ Դա պըապորշչիկ Կոիլենկոն ել։

Կոիլենկոն թափահարեց ինչ վոր թուղթ և խռպոտ
ձայնով աղաղակեց.

— Ընկերներ, հեռագիր ե ստացված Հյուսիսային
ֆրոնտից: Տասնյերկուերորդ բանակը իր վողջույնն
ե ուղարկում խորհուրդների համագումարին: Հյու-
սիսային ֆրոնտում ամբողջ իշխանությունը անցել
ե ֆրոնտի Ռազմա-հեղափոխական կոմիտեյին: Բա-
նակը մեզ հետ եւ:



ՊԱՀԱՆՁԵՑԵՔ ՄԵՐ ԳՐԱՑՈՒՑԱԿԸ

ՎՈՐ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Ե ԶՐԻ

20 коп.

12698

Арм.

Н 2-3168



8

Н. Олейников

Боевые дни

На архангельском языке

бзА

т

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ С. С. С. Р.
Москва, центр. Никольская, 10

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0043166

A 1
7263